

ԳԵՐ. ԱՆԴՐԷԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

Արդէն յայտնի է մեր Ազգայնոց ի Շլամախի պատահած բազմադէտ երկրաշարժը: ԳԵՐ. Ընդդէմս Արքեպիսկոպոս՝ տեղւոյն Հոգեւոր Տեսուչը՝ իւր սիրելի ժողովրդեան նպաստներ հայթայթելու համար՝ ինչպէս զբաժ էր իւր Թեմի ազգայնոց՝ նոյնպէս դիմեց ի Մայր Աթոռս ի 1-ն ամսոյս: Պէտք եղած անօրէնութիւնք արդէն կարգադրուեցան. և յառաջակայ ամսոյս սկիզբները՝ Նորին Գերապատուութիւն պիտի վերադառնայ ի Շլամախ՝ իւր սիրելի Հօտը խնամելոյ համար:

Այս առթիւ Նորին Գերապատուութեան ցցուցած Հայրական սէրը՝ եռանդը՝ և բարեխնամ պաշտպանութիւնքը իւր Հօտին համար՝ չեն կարօտ գովեստից, որովհետեւ գործոց և ջանից արդիւնքն բաւական են պանծացնել և փառաւորել զնա:

ՆՈՐ ԶԵՌՆԱԴՐԵԱԼՔ.

Ներկայ ամսոյս մէջ՝ մեր Ս. Լիկեղեցւոյ Հոգեւորականաց դասը յաւելացոյց չորս Առասկրօն եկեղեցականք, որք մի քան զմի ընտիր յատկութեամբք զարգացած՝ ուսեալ և լեզուազէտ և բարեկիրթ երիտասարդք են: Որովք պէտք է փառաւորուին Վեհ. Աթոռիկոսի ջանքն և փութեռանդն հոգածութիւնք մեր Ս. Լիկեղեցւոյ համար ուսեալ՝ և կրթեալ և բարի հովիւներ պատրաստելոյ և կարգելոյ համար:

Ողբա են Սարկաւաղունքն Պաղտատար Ս. Պաղտատարեանց, Աւետիքֆինաչեանց,

Ախասարկաւաղ Ստեփան Ստեփանէ — որ երբեմն հրատարակուող «Հայկական աշխարհի», Խմբագիր և հրատարակողն էր — և Լեղեայ Բաստամեանց:

Վերջինը ի 19-ն ամսոյս, ընդունեց Ախասարկաւաղութիւն, և ի 20-ն՝ ընդ Ստեփանէի Սարկաւաղ ձեռնադրեցան ի ԳԵՐ. Պետրոս Լպիսկոպոսէ Վեհապետեան:

Իսկ ի 26-ն ամսոյս չորեքեանն ի միասին արժանացան Առասկրօն Վահանայութեան կարգին, և այսօր (ի 29-ն) օրհնուեցան յԱրեղայութիւն՝ հրամանաւ Վեհափառ Հայրապետի:

Ձեռնադրողն էր ԳԵՐ. Ընդդէմս Ս. Արքեպիսկոպոս, որ և այս առթիւ մի ղեկեցիկ ատենաբանութիւն խօսեցաւ Լիկեղեցւոյ բեմն:

Նոր ձեռնադրեալքն այսինքն՝ Պաղտատարն՝ Սահակ, Աւետիքն՝ Յովսէփ, Ստեփանն՝ Խորէն, և Լեղեայն՝ Վահան անւանեցան ի ձեռնադրութեանն: Առաջին երկուքն են միաբան Ս. Ստեփաննոսի Վանուց ի Սաղեան ի Վիճակին Շլամախւոյ, երրորդն է միաբան Մայր Աթոռոյս, և չորրորդն՝ միաբան Ս. Գայիանէի Վանուց:

Յոյս մեր հաստատուն է ի Տէր, զի Նորընծայքս այսոքիկ՝ մեր բազմակարօտ Ազգի և Առաքելական Լիկեղեցւոյ համար՝ անձնանուէր՝ հարազատ՝ հաւատարիմ՝ անձանձիր և արթուն պաշտօնեայք պիտի հանդիսանան, մանաւանդ պիտի փութան և ամեն ջանք ի գործ պէտք է դնեն մեր սիրելի Ազգի յառաջագիմութեան և լուսաւորութեան և Արօն. զգացման: Ուստի բարեմաղթեմք յԱստուծոյ, զի երկնային շնորհօքն և խմաստութեամբք լցուցանէ և զարդարէ զսոսա. տացէ՛ Տէր զօրութիւն,

կարողութիւն և յաջողութիւն ամենայն բարին պատահացն և ջանից. փայլեցուցանէ զսոսա լինել մշակ առանց ամօթոյ յայդի Տեառն, աղ Համեմիչ յաղդի մերում, և պայծառ լոյս հոգւով և մաօք կուրացելոց:

ԶՐԿԱՆՔ

Պ. ՄԱՐԿՈՍԻ ԱՂԱԲԷԳԵԱՆՑ.

ԽճԷՔԻՆԻ ԼԵՐԱՐԱՐ ԱՄԱԳԻՐՈՒ.

Միմիայն ազգասիրութիւն քարոզողներ առանց ազգասիրական գործողութեան կամ թէ ազգասէր անուան տակ թագ կեցած ու ազգին վնաս տուողներ այո՛ շատ գտանվում են մեր մէջ, բայց ազգասիրական գործք, որ իրապէս կատարելագործում են և կենդանացնում ամենայն ինչ, սակաւներում են երևում: Սորա կենդանի ապացոյցը տեսնում ենք Զմիւռնացի Պ. Մարկոս Աղաբեգեանցի վերայ, որ յառաջ Ռուսաստանում խմբագիր էր Առունկ Հայոց աշխարհի, ամսագրին: Սա անձանձիր քարոզում էր ազգասիրութիւն, ազգային ուսումնարանների յառաջագիմութիւն, յորդորում էր ամենին ազգի լուսաւորութեան համար չինացի ոչինչ, բայց ինքը ընդհակառակը յափշտակում է ազգի աղքատ ուսումնարանի սեպհակաւութիւնը: 1864 թուականում, երբ Համախոյ Առաջնորդ հանգուցեալ Դանիէլ Արքեպիսկոպոսը ժողովարարութիւն էր անում Տփլիսում տեղւոյս հոգևոր դպրոցի համար, ազգասէր անւանեալ Աղաբեգեանցն, ո՛վ գիտէ թէ ի՞նչ հնարներով, խնդրում է նրան և պարտք է տոնում երկու ամիս ժամանակաւ ուսումնարանի համար ժողոված գումարից 150 ռուբլի, որոյ համար և տալիս է օրինաւոր մուրհակ, որն որ գտնվում է այժմ ևս Հոգաբարձութեանս գործոց մէջ: Պ. Աղաբեգեանցն անվճար թողլով իրա այս պարտքը՝ գնում է Վ. Պօլիս. երկար ժամանակ չտանալով նրանից այս ազգային գումարը, տեղւոյս Վիճա-

կաւոր Առաջնորդը և Հոգաբարձութիւնս քանի անգամ պահանջում է նորանից այս դրամը Վ. Պօլսոյ Գերապատիւ Պատրիարքի միջնորդութեամբ, բայց նա Աղաբեգեանցն, ինչպէս արժանահաւատ աղբիւրից իմացանք, փոխանակ զիջողութիւն կամ միջոց խնդրելոյ իրա պարտքն վճարելոյ համար, խղճա՞նեւ հոգւով զլանում է բողբոջին, յայտնելով թէ՛ նա այս պարտքը, որպէս թէ վճարել է արդէն նոյն իսկ Դանիէլ Արքեպիսկոպոսին: Զարմանալի՜ ստույթիւն Մէք խորհուրդ կտայինք Պ. Աղաբեգեանցին, որ նա, թէ և յետին աղքատութեան մէջ ևս լինէր, այնու ամենայնիւ յանձն չառնոյր մի այսպիսի տմարդութիւն և խաբէական գործ. բաւական էր, եթէ նա աշնուաբար խոստովանէր իրա նեղ վիճակը, մէք չնայելով ուսումնարանի դրութեանը՝ կարող էինք զիջողութիւն անել նրան: Բայց ուրանալ բողբոջին և խիղճը մեռցնելով զօրպարտել Հանգուցեալ Արքեպիսկոպոսին, ազգասիրի՞ գործ է թէ խաբեայի:

Հոգաբարձութիւնս խնդրում է Արք. ամսագրոյ Խմբագրութիւնիցը հրատարակել Պ. Աղաբեգեանցի այսօրինակ պարտազանցութիւնը ի գիտութիւն բոլոր ազգայնոց մերոց: Այս ծանուցման մի մի օրինակը ևս ուղարկուեցաւ Վ. Պօլսոյ Մասիս և Տփլիսու Մեղու Հայաստանի օրագրաց Խմբագիրներին ի հրատարակութիւն:

ՀԻՔԷՔԻՆԻ ԱՂԵՔԻՆ — ՀԻՔԷՔԻ ԴԵՐՈՅԻՆ ՇԱՄԽԵՐՈՅ

ՊԼԷՐԳԻ ԹԱՌՄԱՆԵԱՆԿ

ՅԱԼԻՔ ԱԵՇԵՎԱԵԱՆԿ

ՍԱԽԱՅ ԱՂԷԺԱՆԻՔԵԱՆԿ

ԼԱՊԵՐԱՍԱՐ ԱՊԱՐԵԱՆԿ

ՆԻՒԼԱՅ ԱՄՃԻԱՏԵԱՆԿ

Ի 29 Նոյեմբերէ 1874 թ.

Ի Բ. ՇԱՄԽԵՐՈՅ:

(Թէ և մեզ անյայտ պատճառով ուշ ստացաք վերոյ հրատարակեալ գրութիւնը, բայց Հոգաբարձուաց Թախանձագին խնդրանաց համար մանաւանդ ի սէր դաստիարակութեան և լուսաւորութեան